

դողպողար և բերնէն այս խօսքերս կը լսուէին. «Այս թուղթը գործակալին տար, և մէջը նշանակուածը առ հոսքեր : »

Գլայն ու Օսքար մէկմէկու երեսը նայելով կ'ուրախանային այս բարի յաջողութեանս վրայ . իշխանը նորէն իր տեղը նստաւ . խոր լուութիւն մը տիրեց հոն : Մինչդեռ սենեկապանը դրամի պարկ մը շալկած ներս մնուաւ և դնելով զայն սեղանին վրայ ըստաւ . «Ամբողջ դումարն այս պարկիս մէջ կը բովանդակի : » Օսքար ալ հրամայեց անոր՝ որ տանի զայն վարը կառքին մէջ զետեղէ , և Գլայնի ալ պատուիրեց՝ որ երթայ ծառային հետ և անոր օգնելէն վերջը կառքով պանդոկ երթայ , ուր ձիերը կը ճարակէին , և հոն սպասէ իրեն : Նոյն միջոցը տեսնալով Գլայն իր ազատութեան վայրկեանը՝ ինչ անպատմելի ցնծումի մէջ էր . կէս մէջքով ծռած յարգութիւն տալով կ'երթար հրամանը կատարելու :

Նոյն ատեն հայրը առանձին գտնալով իր որդին .

— Միայն այս անգամ կ'օգնեմ ձեզի , ըստաւ , ասկէ ետքը յոյս մի ունենաք , և ջանացէք շատանալու անով՝ ինչ որ գործակալիս ձեռքով ամսէ ամիս կը յղեմ ձեզի : Եթէ ասկէ ետքը նորէն յանդդիք այսպիսի մնխողովթեան մը ձեռք զարնելու , նոյն միջոցը ես ալ ձեր պատրաստամիտ գանձապետը չեմ ըլլար :

— Ուրեմն դու կ'ուզես հրապարակաւ խայտառակել զմեզ , ըստ Օսքար ծաղքելով :

— Այո , ուրիշ ճար չեմ գտնար ձեր որկորը յազեցընելու :

— Ուրեմն դու մեզի հետ յայտնապէս պայքարիլ կ'ուզես . այս բանս գէշ չէ . բայց ես կը զարմանամ թէ ինչպէս մեզի գէմ կը զինխս , մինչդեռ տպայութեան ժամանակ զմեզ քու փափկութեանդ և մեծահաց կոչունքներուդ մասնակից կ'ընէիր :

Իշխանը սրտի անձուկէն կը հառաչը , և քանի որ որդին լրբարար կը

խօսէր , ինքը աչքերը խոնարհած գետինը կը զննէր . բայց յանկարծ երբ բարձրացընելով աչքերը իրաւախօս և յաղթական Օսքարին երեսը նայեցաւ , արասափէն ու ամօթէն ընելիքը չէր զետեր . վերջապէս զայրագին « զնա , կորիր առջնէս , անիծեալ » , գոչելով , իր սենեկէն դուրս ըրաւ որդին , որ հօրը անէծքը ճակատը՝ վար իջաւ սանդուղներէն և դնաց :

Իր շարունակույն :

## ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՐԱՄՔ

Վաճառականութեան սկիզբը փոխանակութեամբ սկըսաւ , որով մարդիկ իրենց ունեցած առատ բաները մէկմէկու հետ կը փոխէին ըստ պիտոյից . ինչպէս , թէ որ մէկը որսորդութեամբ կենդանիներ զարնէր , և երկրորդ մը իր երկրէն պտուղներ քաղէր , եթէ առջնը երկրորդին պտուղներուն ցանկար և երկրորդն ալ առջինին կենդանւոյն մսին կամ մորթին , նոյն բաները իրարու հետ կը փոփոխէին : Վաճառականութեան սկիզբը այս տեսակ փոխանակութեամբ եղաւ , և ինչուան մեր օրերն ալ Ասիոյ և Ափրիկոյ թափառական ժողովրդոց շատերն՝ այս կերպով վաճառականութիւն կ'ընեն : Բայց վաճառելեաց գինը սահմանելու համար տակաւին կերպ մը չըլլալով , մէկ կողման սաստիկ առատութիւնը և միւս կողման ստիպիչ կարոտութիւնը՝ գինը կը սահմանէր : Բայց երբ սկսան մարդիկ մշակութեան պատճառաւ խմբովին բնակիլ , և հանապազօրեայ կենաց զբաղմունքն և պէտքը շատցան ու զժուարացան , և հարստութեան ու հաճոյից սէրն աւելի ևս արմատացաւ սրտերնուն մէջ , պէտք զգացին իրենց ընչիցը և վաճառելի իրաց աւելի արդար գին մը պահանջելու : Նախ չափելու սկսան , մարդուս մարմնոյն զանազան մասերն իրենց չափ առնելով , ինչպէս են թիզ , ոտք , արմուկն և բազուկ . բայց ցորենոյ և պտղոց համար

քոռ<sup>1</sup>, գրիւ<sup>2</sup>, տակառաչափ<sup>3</sup> և ուրիշ ասոնց նման չափեր հնարեցին: Ժամանակ անցնելէն ետքը, վաճառելի իրաց գինը իրենց ծանրութենէն սկսան չափել, բայց այն ալ նոյնպէս չատ անձիշդ բան էր. վասն զի վաճառելի և անոր փոխադարձ ընդունելու նիւթոց ծանրութիւնը՝ մէկմէկու կը բաղդատէին: իրաւ կը կարդամք Ս. Գրոց մէջ թէ Արքահամ կշիռ մը դործածած ըլլայ, բայց նոյն ժամանակուան դործածուած կշիռները ոչ սլաք ունէին և ոչ թաթ, այլ նիւթական փայտի մը կտորէ, կամ առ առաւելն, տախտակէ կը բաղկանային, որուն վրայ վեր՝ ի վերոյ մը հաւասարակշռութեան կէտը կը նշանակէին, և մէկ կողմը նիւթը, մէկալ կողմը ծանրոցը կը դնէին: Թէպէտ և այսպիսի նիւթական կշոյ մ'ալ գիւտը շատ հին ժամանակի բան չէ, որովհետև մարմնոց ծանրութեան իսկ չափը չէին զիտեր, որ հաւանաբար մետաղաց վրայ աշխատելէն վերջը սկսան իմանալ. սակայն մարդիկ և 'ի հնուց իսկ խորհրդածած էին, թէ մարմին մը որ իր ծանրութեան կեդրոնէն կախուի, հաւասարակշռութեան մէջ կը մնայ. և ինչպէս կը տեսնենք որ անուառումն բեռնակիրք՝ բնական կերպով առանց սորվելու՝ ծանր և երկայն գերաններ հաւասարակշիռ կերպով կոնակնուն վրայ դնելով կը տանին դիւրութեամբ, այսպէս նաև հինք կարօտութէ բռնադատուած ստիպուեցան այս զիտողութիւնն ընել, մանաւանդ երբ բեռան ընտանեցուցած կենդանի մը չունէին և սայլ շինել ալ չէին զիտեր. թէպէտ բնութեան այս ընդհանուր օրէնքը չկրցան խօսքով բացատրել:

Փոխանակութեամբ եղած վաճառականութեան մէջ բնականապէս ստիպ կը պատահէր, որ վաճառողին պէտք եղած բանը գնողին քով չգտնուելով, հարկ կ'ըլլար որ գնողը այնպիսի բան

մը տային 'ի փոխարէն՝ որ հաւասարապէս յարդի ըլլար ամենուն, և այս ոճով յարդի սեպուած նիւթոյ մը հետ համեմատելով ամենայն ինչ՝ անոնց գինը կը սահմանուէր. և որովհետև ըստ բնական կարգի, յարդի սեպուած բան մը ոչ սովորական պէտք է ըլլայ և ոչ առատութեամբ գտնուի, անկէ կը հետեցը նէին իրաց արժէքը. ուստի քանի մը կողմեր սակաւագիւտ խեցեմորթներ, պտուղներ և թանկագին փայտի կտորուանկներ՝ փոխանակութեան յարդի նիւթ եղան: Ութհարիւր տարի կայ որ Պալդիկ ծովուն բուկէն կղզւոյն մէջ կը տաւը փոխանակութե գլուաւոր նիւթմ'էր, ինչպէս մեր օրերն ալ Ավրիկիոյ և Եթովպիոյ մէջ աղը, և կրէնլանտիոյ մէջ ձուկը զրամոյ տեղ կը դործածուին:

Բայց հազիւ թէ մարդիկ մետաղաց բնութիւնը և զանոնք գործելու կերպը գտան, տեսնալով անոնց կերպ կերպ օգտակար յատկութիւնները, ինչպէս բաժանելութիւնը որով ամենափոքր մասեր կրնան բաժնուիլ, և գժուարաւ խանդարող և զիւրատար և միանգամյն սակաւագիւտ ըլլանին, համարեցան թէ լաւագոյն կերպով վաճառելի և գնելի իրաց արժէքը անոնցմով կը բնան սահմանել. և ահա այսպէսով եղաւ դրամոց սկզբնաւորութիւնը: Մկըդրան խառն վիճակի մէջ կը կշռէին մետաղները և անխտիր կը դործածէին, ինչպէս կը կարդամք Ս. Գրոց մէջ թէ Արքահամ 400 սիկլ վճարած ըլլայ իր Սարա կինը թաղած տեղւոյն համար: Ետքը թէպէտ դարձեալ մետաղները խառն վիճակի մէջ կշռելու սովորութիւնը շարունակեց, բայց իւրաքանչիւրին վրայ ծանրութիւնը և արժէքը ցուցընող նշաններ տպեցին: Եւ որովհետև հնոց մէջ անասունք վաճառականութեան մեծ նիւթ մ'էին, անոր համար նոյն կենդանւոյն գնոյն համապատասխանող մետաղին վրայ, նոյն պատկերը տպեցին, ինչպէս լատինք Պէսոս բառէն որ Արչառ կը նշանակէ, զրամը Պէսոսիա անուանեցին. նոյնպէս Յունոց

1 Staja.

2 Moggio.

3 Botte.

Հնագոյն դրամոյն վրայ եղ մը նկարուած էր, և դրամն ալ նոյն անուամբ կը կոչուէր:

Առաջին դրամք հաւանաբար պղնձէ եղան, ետքը արծաթէ. և որովհետև սուղ և յարգոյ մետաղ մ' էր ասիկայ, անոր համար Եբրայեցիք դրամը արծաթ անուանեցին, ինչպէս ինչուան հիմա Գալլիացիք ալ նոյնպէս կ'անուանեն: Բայց չկարծենք ամենեին թէ հին դրամոց վրայի նկարները հիմակուաններուն պէս գեղեցկանկար ըլլան. վասն զի անոնք կըոր, եռանկիւնի կամ քառակուսի զանազան մետաղաց տձե կը տորուանքներ էին, որոնց վրայ մրճով կը փորագրէին, կամ սուր բանով մը արժէքը վրան կը նշանակէին:

Ճարտարարուեստ դրամ հատանող՝ նախ Փիւնիկեցիք եղան. և Քրիստոսէ վեց դար առաջ, բարակ և ճարտար նկարներով դրամներ սկսոն գործածուիլ Յունաստան, որոնցմէ քանի մը հատ ալ հասած է մեղի: Խսկ դրամոց վրայ թագաւորաց դէմքը նկարելու ոռվորութիւնը նախ Պարաիկներն սկսած կ'երևան, Քրիստոսէ 500 տարի առաջ, Դարեհի թագաւորութեան ժամանակ. վասն զի Պարաից դրամները Դարիին ալ կ'ըսուին: Հռովմայեցիք Յունացմէ առին այս սովորութիւնը, և իրենցմէ ալ բոլոր Եւրոպա տարածուեցաւ: Դըրամք՝ կամ զիրենք ձուլել տուողին անուամբ կոչուեցան և կամ նոյն մետաղին դտուած տեղւոյն. ինչպէս Գերմանացւոց թալերը, Յովակիմ-թալեր ըստած տեղէն է, ուր 1517ին շատ բազմաթիւ տպուեցաւ նոյն դրամէն. Խսկ տուքադը, Dicatus բառէն, վասն զի նախ Խտալացի դուքսերն եղան ձուլել տուողը. և Անգլիացւոց կինէն ալ, կուինէա նահանգէն, ուր տեղի ոսկին առատ է, և դեռ ասոնց նման ուրիշներ. ինչպէս Գաղղիացւոց Լուին կամ Նարոլէոնը:

Բայց Երբ մարդիկ ընկերական կենօք բազմութեամբ միաբան սկսան բնակիլ, ոմանք տարբեր պտուղներ և արուեստաշէն կարասիներ ունենալով,

որոցմէ տակաւին զուրկ էին իրենց դրացիները, հարկաւ կը փափաքէին ունենալ. ուստի ոմանք ձեռք զարկին, գեղի և կամ քաղքի մը թէ երկրին և թէ արուեստաշէն բերոց առասներէն դրացեաց երկիրը տանիլ, զորոնք կամ իրենց չունեցած պարէնով և կամ դրամով կը փոփոխէին. և այս եղաւ վաճառականութեան սկզբնաւորութիւնը:

Երբ դրակից գեղ մը իրենց ունեցած բաներուն կարօտութիւն չէր ունենար մեծ շահ ընելու համար, հարկ կ'ըլլար աւելի հեռու տեղ մը երթալ. որով օտար երկիրներ անցան, ուր տարբեր պտուղներ և զարդարանքներ տեսնելով հայրենիք գառնալու միջոց հետերնին բերին, և մեծ շահով իրենց ազգայնոց վաճառեցին: Շատ չանցաւ այս պտուղներէն և զարդարանքներէն աւելի առատութեամբ ունենալ փափաքեցան. որով հեռաւոր ճամբորդութիւններն աւելի յաճախեցին, և նորասիրութեան փափաքով աւելի ևս առաջ գացին: Քաղաք մը միւս քաղքի ճամբայ բացաւ. և այս կերպով երկրիս հեռաւոր կողմերն ալ վաճառականութիւնը տարածեցաւ: Մարդկային ընկերասէր բնութիւնը և առանձին ճանապարհորդելու վաճանգները, ստիպեցին զիրենք միաբանութեամբ և կարաւանով վաճառականութեան ելլալ: Այս կերպ վաճառականութիւնը ոչ միայն հին ժամանակ, այլ և ինչուան հիմայ Արաբացւոց մէջ կը տեէ. և Զինաստանէն ինչուան Որւսաստանի հիւսիսակողմը և արևմտակողմը կարաւաններ կ'երթան, որոնք բովանդակ Ասիան կտրելով, ուրիշ բաներէն զատ՝ թէյ կը բերեն Եւրոպա: Վաճառականութեան պատճառաւ նորանոր ճամբաններ բացուեցան, կամուրջներ ձգուեցան, օթևաններ շինուեցան, կենդանիք բեռ տանելու վարժեցան, և կառաց գիւտը դտնուեցաւ, և 'ի վեր քան զամենայն շոգեկառաց գերազանց գիւտը:

Վաճառականութիւնը, մանաւանդ ծովագնացը, երկու մեծամեծ շահուց պատճառ եղաւ: Առաջինն է, որ ասով

Երկրիս ամեն կողմերը իրարու հետ ծառ նօթացան . կը ճանչնանք և կը վայլենք զինու պտուղները , ինչպէս նարինջ և թէյ . կ'իմանանք բովանդակ աշխարհի սովորոյթները և բարձրը , և իրենց ճարտարութեանց գործուածները . կը կարդանք վաճառականութեան առթով ճանապարհորդող անձանց գրոցը մէջ խորին Ասիոյ վարատական ժողովրդոց կենաց հանգամանքները . կը ճանչնամք ընդ մէջ Ամերիկոյ և Ասիոյ մեծատարած Ռվկիանու մէջ եղած կղեաց բնակչաց հացի ծառը , և տեղեակ կ'ըլլանք կրէնլանտացւոց խեղճ կենացը , որ պալենայի մասվ միայն կը մնանին : Շահուց և հարստանալու անյագ տենչը , մշտաշարժութեան մէջ կը բռնէ զմարդիկ , և երկրիս հեռաւոր կողմերն ալ իրարու հետ յարաբերութեան մէջ կը պահէ : Եւրոպական նաւատորմիքը Ափրիկոյ հարաւային ծայրերը երթալով , Բարեյուսոյ Դիմէն գինի և փղոսկը կը բերեն , արևելեան Ասիոյ հիւսիսակողման ծոցերէն ալ պալենայ և փոկ կ'որսան , և թանկաղին մուշտակներ կը բերեն : Կ'երթաննոյնալէս Արևմտեան Հընդկաց կղիները , ուր քաֆֆէն և շաքարը առատ է . և անկէց ալ համեմից և խնկեղինաց բնավայրը կ'անցնին , որ է Հնդկաստան :

Խսկ երկրորդ շահը մեծագոյն ևս է . վասն զի վաճառականութեամբ , անխրտիր որ և իցէ վիճակի մարդիկ , միայն թէ կամք չպակսի , կրնան ազատաբար ունեցած կարողութիւննին , աջողակութիւննին և խոհեմութիւննին բանի բերել : Ասոր մէջ ոչ թէ զօրաւորը կը գերազանցէ , այլ ով որ լաւագոյն և դիւրագնոյ ապրանքներ կը վաճառէ : Վաճառականութեան մէջ նորանոր գեղեցիկ և մեծամեծ գիւտեր մտածելը և գտնելը մարդէս կը կախուի . շահու , փառաց և նախանձաւորութեան սէրը՝ կը դրդէ կ'արթընցընէ և կը մղէ 'ի գործնակ անհօգ և կիսարթուն գլուխները . կը ծաղկին արհեստք , վասն զի ամենայն ոք կը ջանայ նորանոր գիւտերով դիւրացընել և կատարելագործել իրենինը ,

որով կը ճանչնայ մարդ իր պատիւը և կը յառաջէ և կ'երջանկանայ մարդկութիւնը :

## ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՈՒԹԵԼԱՑԱՆԵՐՈՐԴ

ՄՔԱՆՂՈՐԾԻ ՃՆՂՈՒՄԼ .

(Տես Երես 260)

Երբ մէկը աղէկ աշխատելէն եաքր , սիրելի օրիորդիկ , կ'ուզէ քիչ մը հանգիստ առնուլ , կ'ըսէ ինքնիրեն . քիչ մը շունչ առնունք . ինչու որ չնշելը մինակ ինքնիրեն կ'ըլլուի ու հոգ մ'ընելու պէտք չունի :

Բայց եթէ մինակ ինքնիրեն կ'ըլլուի , ինքնիրեն մինակ ալ չբացատրուիր . և քեզի ըսելովս թէ հիմա շունչ առնենք , ինծի հանգիստ տալչեմ կրնար , որ չնշառութիւնքեզի մեկնելու յանձնառու եղած եմ :

Թէ որ այս երկրէս ըլլայիր , քեզի կը յիշեցընէի թէ ինչ կ'ըլլայ երբ մէկը թթուով պատրաստած կաղամբի <sup>1</sup> , պնակին մէջ պատառաքաղը խոթէ : Միաքը՝ միայն անկէ քիչ մը առնել է . սակայն այն անիծած շիւղերն անանկ մէկմէկու հետ խառնուած պլլուած են , որ առանց հրաւիրուելու՝ մէկմէկու ետևէ կը ձգին , անանկ որ պնակիդ մէջ լեռ մը կը քաշես կը դիզես :

Այս մեր չնշառութեան գործն ալ քիչ մը այս տեսակ կաղամբին կը նմանի , ներէ խնդրեմնանութեանս : կ'ուզէի քեզի պնակով պղտի բաժին մը առջենդ դնել , բաժին մը որ տղու վայել ըլլայ . այլ կը տեսնեմ որ մեկնութիւնները մէկմէկ ճանկած առաջ կու գան . կամայ ակամայ պէտք է որ քեզի հետ

1 Choucroute.